

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱՐՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱՐՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Երևան 2023

«Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքների կազմակերպման ուղեցույց»։ Ձեռնարկ։ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան։ Էդիթ Պրինտ, 2023 - 139 էջ

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից  
Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից

**Մասնագիտական խմբագիր՝** մ.գ.թ., դոցենտ Սվաջյան Արաքսիա Հովհաննեսի

**Գրախոսներ՝** մ.գ.թ., դոցենտ Հարությունյան Մարիաննա Ռուբենի,  
մ.գ.թ., դոցենտ Ազատյան Թերեզա Յուրիի

**Հեղինակներ՝**

Սվաջյան Արաքսիա Հովհաննեսի  
Ադամյան Հայկուհի Արտաշեսի  
Մանուկյան Ալինա Տիգրանի  
Գարեգինյան Անի Արմենի  
Անտոնյան Արևհատ Կամոյի

**Խմբագիր՝** Սարգսյան Հայկանուշ Անատոլի

**Համակարգչային ձևավորում՝** Ստեփանյան Աստղիկ Ռոբերտի  
Դավթյան Հեղինե Լյովայի

Սույն ձեռնարկի նպատակն է աջակցել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը, ինչպես նաև ապահովել միասնական գործելաճև և ընթացակարգեր հանրակրթական ուսումնական հաստատությունների և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների միջև:

ISBN

ՀՏԴ  
ԳՄԴ

Տպաքանակը՝ 200 օրինակ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>4</b>
<b>ԲԱԺԻՆ 1. ՏՄԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>8</b>
1.1. ՏՄԱԿ-ի սահմանումը.....	8
1.2. Գործունեության նպատակը.....	8
1.3. Կանոնադրությունը .....	8
1.4. Գործառույթները .....	9
1.5. Շահառուները .....	12
1.6. Շահագրգիռ կառույցները.....	13
1.7. Շահառուների ընդգրկման և ուղղորդման կարգ.....	15
<b>ԲԱԺԻՆ 2. ՏՄԱԿ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....</b>	<b>17</b>
2.1. Մանկավարժահոգեբանական աջակցության բաժնի գործառույթները .....	17
2.2. Գնահատման և մշտադիտարկման բաժնի գործառույթները .....	19
2.3. Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի գործառույթները .....	20
2.4. Արտակենտրոն ծառայություններ տրամադրող մասնագետների աշխատանքի կազմակերպումը .....	21
<b>ԲԱԺԻՆ 3. ՏՄԱԿ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ .....</b>	<b>22</b>
3.1. Գնահատում .....	22
3.2. Աջակցություն .....	24
3.3. Մշտադիտարկում.....	26
3.4. Խորհրդատվություն .....	26
3.5. Վերապատրաստում .....	27
3.6. Մեթոդական մշակումներ.....	28
<b>ԲԱԺԻՆ 4. ՏՄԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>29</b>
4.1. Տարեկան պլանավորում.....	29
4.2. Հաշվետվությունների կազմում .....	30
<b>ԲԱԺԻՆ 5. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....</b>	<b>32</b>
5.1. Հաստիքացուցակ.....	32
5.2. Աջակցության սենյակների կահավորում .....	32
5.3. Ռեսուրս-սենյակի կահավորում.....	34
5.4. Անվտանգություն .....	35
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....</b>	<b>37</b>
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>138</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը (ՀՕ-200-Ն):

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք<sup>1</sup> (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

Երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակում.

- 1) ուսումնական հաստատության մակարդակ՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կողմից,
- 2) տարածքային մակարդակ՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից (այսուհետ՝ ՏՄԱԿ),
- 3) հանրապետական մակարդակ՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից (այսուհետ՝ ՀՄԿ):

ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» համաձայն՝ 2016 թվականից մինչ օրս կազմավորվել են թվով 20 ՏՄԱԿ-ներ ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Վերոնշյալ ՏՄԱԿ-ները մեծամասամբ վերակազմակերպվել են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների հիման վրա, իսկ Տավուշի, Արարատի և Վայոց Ձորի մարզերում, որտեղ առկա չէին հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ, ծառայությունները պետական դրամաշնորհային ծրագրով պատվիրակվում են տարբեր կազմակերպությունների:

Առաջնորդվելով ՀՀ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով՝ Հանրակրթության մասին ՀՀ օրենքով և Կրթության կազմակերպման

<sup>1</sup> Ուղեցույցում «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք» արտահայտությունը վերաբերում է նաև «կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք» ձևակերպմանը:

մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգով, ՏՄԱԿ-ները տրամադրում են ՄՀ աջակցության հետևյալ ծառայությունները՝

- 1) խորհրդատվություն երեխայի ծնողին և դպրոցի մանկավարժական աշխատողներին՝ երեխայի կրթության կազմակերպման և սոցիալական ներգրավման վերաբերյալ.
- 2) խորհրդատվական այցեր ՏՄԱԿ-ների սպասարկման տարածքների կազմակերպություններ՝ ըստ փոխհամաձայնեցված ժամանակացույցների.
- 3) ՄՀ նեղ մասնագիտացված ծառայությունների տրամադրում այն անձանց, ովքեր ունեն խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ, ինչպես նաև՝ բացառիկ ընդունակություններ.
- 4) ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպմանն աջակցող մասնագետների՝ ուսուցիչների, նրանց օգնականների վերապատրաստումներ, ծնողների համար ուսուցողական դասընթացների կազմակերպում.
- 5) տնային պայմաններում ուսուցման կազմակերպմանն աջակցելու նպատակով մասնագետների տնայցերի իրականացում՝ ըստ ուսումնական հաստատությունների հայտերի:

Դատելով վերոնշյալ գործողություններից՝ ՏՄԱԿ-ները բովանդակային և ծավալային մեծ աշխատանք են իրականացնում, և տարիների ընթացքում, բացի ձեռքբերումներից, արձանագրվել են նաև մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են կառույցների լիակատար արդյունավետ գործունեության իրականացմանը: Առավել շատ հանդիպող խնդիրներից է ՀՀ մարզերում կազմավորված ՏՄԱԿ-ներում համապատասխան որակավորմամբ մասնագետների բացակայությունը: Նշված խնդիրը հաղթահարելու նպատակով ՀՄԿ-ի կողմից կազմակերպվում և իրականացվում են մասնագիտական շարունակական զարգացմանը նպաստող խորհրդատվություններ ու վերապատրաստումներ:

ՏՄԱԿ-ների գործունեության ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ՏՄԱԿ-ները գործելաճի միասնականության պահպանման խնդիր ունեն, յուրաքանչյուր ՏՄԱԿ առավել կարևորում է որևէ գործառույթ, ինչի արդյունքում առանձին դեպքերում աշխատանքի տարբեր ուղղություններ են շեշտադրվում: ՏՄԱԿ-ների հաստիքացուցակների վերլուծությունը ցույց տվեց, որ ՏՄԱԿ-ները որպես կառույցներ նույնպես ունեն տարբեր կառուցվածքներ, դրանք հիմնականում ըստ գործառույթների առանձնացված բաժիններ չունեն, ինչի արդյունքում մասնագետներն իրականացնում են մի քանի գործառույթներ՝ գնահատում, աջակցություն, խորհրդատվություններ և այլն, և երբեմն ամբողջությամբ ու հստակորեն չեն պատկերացնում իրենց գործառույթները, ինչից էլ, բնականաբար, տուժում է աշխատանքի արդյունավետությունը:

ՀՄԿ-ն, հիմնվելով իր կանոնադրական գործառույթների վրա, սահմանում է ՄՀ աջակցության և ԿԱՊԿ գնահատման միասնական մոտեցումը, մշակում է ՄՀ ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերը և համակարգում ՏՄԱԿ-

ների աշխատանքները, ապահովում է ԿԱՊԿ ունեցող երեխաների Տեղեկատվական համակարգի գործարկումը, իրականացնում տվյալների վերլուծություն և առաջարկություններ անում քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ:

Հիմնվելով վերոնշյալ գործառույթների վրա և նպատակ ունենալով բարձրացնել ՄՀ ծառայությունների արդյունավետությունն ու ապահովել ծառայությունների տրամադրման միասնականությունը՝ ՀՄԿ-ն մշակել է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքների կազմակերպման ուղեցույց, որը կօգնի աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնել և ապահովել միասնական գործելաոճ ու ընթացակարգեր: Սույն ուղեցույցում ներկայացված են ոչ միայն ՏՄԱԿ-ի կառուցվածքն ու գործառույթները, այլև հարուստ հավելված, որտեղ տրված են ՏՄԱԿ-ի գործունեության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ձևանմուշները:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՄԿ – Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՏՄԱԿ – տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

ՄՀ աջակցություն – մանկավարժահոգեբանական աջակցություն

ԿԱՊԿ – կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ՆՈւՀ – նախադպրոցական ուսումնական հաստատություն



**1.1. ՏՄԱԿ-ի սահմանումը**

«Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող (կազմակերպող, համակարգող) և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող ոչ առևտրային կազմակերպություն է: Կենտրոնի կողմից տրամադրվում է երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տարածքային մակարդակը:

**1.2. Գործունեության նպատակը**

«Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության նպատակն իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության մասնակցային կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է:

**1.3. Կանոնադրությունը**

«Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Կառավարության որոշմամբ հաստատված կանոնադրությամբ:

Կանոնադրության համաձայն՝

1. ՏՄԱԿ-ն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Հանրակրթության մասին ՀՀ օրենքով, ՀՀ օրենսդրությամբ: ՏՄԱԿ-ը կարող է համագործակցել օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնել ձեռնարկատիրական որոշակի գործունեություն և իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործել կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար:
2. ՏՄԱԿ-ի գործունեության նպատակն իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է: ՏՄԱԿ-ը կրթության կազմակերպման ոլորտում իրականացնում է ՄՀ աջակցության տարածքային մակարդակի ծառայությունների տրամադրում, իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների կրթության աջակցության ծառայությունների տրամադրում, համակարգում և վերահսկում է այդ ծառայությունների մատչելիությունը և արդյունավետությունը, իրականացնում է երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:

3. ՏՄԱԿ-ն իր սպասարկման տարածքում
  - ապահովում է ՄՀ աջակցության և ԿԱՊԿ գնահատման միասնական համակարգի գործարկումը.
  - տրամադրում է խորհրդատվություն.
  - կազմակերպում և անցկացնում է սեմինարներ, ինչպես նաև հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստումներ.
  - գնահատում է երեխայի ԿԱՊԿ-ը և կազմում եզրակացություն երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ.
  - երեխաներին և նրանց ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին, մանկավարժական աշխատողներին տրամադրում է ՄՀ աջակցության ծառայություններ.
4. ՏՄԱԿ-ը կառավարում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը, գործադիր մարմնի ղեկավարը՝ տնօրենը:
5. ՏՄԱԿ-ի սեփականությունը ձևավորվում է հիմնադրման ժամանակ: ՏՄԱԿ-ն իր հայեցողությամբ տնօրինում, տիրապետում և օգտագործում է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը: ՏՄԱԿ-ը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
6. ՏՄԱԿ-ը վերակազմավորվում և լուծարվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

#### 1.4. Գործառույթները

Տարածքային աջակցության կենտրոնի հիմնական գործառույթն է համակարգել և աջակցել սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում ներառական կրթության իրականացմանն ու սովորողների՝ կրթության մեջ մասնակցության ապահովմանը, ինչպես նաև տրամադրել կրթության աջակցության ՄՀ ծառայություններ:

Ստորև ներկայացվում են ՏՄԱԿ-ի հիմնական գործառույթները.

- Մանկավարժահոգեբանական աջակցություն

*ՄՀ աջակցությունը՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողին մասնագիտական ծառայության տրամադրումն է:*

- ✓ ՄՀ աջակցության ծառայություններ (հատուկ մանկավարժական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական) տրամադրել սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորող Տարածքային մակարդակի գնահատում անցած և ԿԱՊԿ ունեցող ճանաչված երեխաներին՝ ըստ «0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման

մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգով» (այսուհետ՝ ՄՀ աջակցության կարգ) սահմանված ծավալի և տևողության<sup>1</sup>: ՄՀ աջակցության ծառայությունները պլանավորվում և իրականացվում են սովորողի ԱՈւՊ-ի համաձայն:

- ✓ Աջակցության ծառայություններ (հատուկ մանկավարժական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական) տրամադրել սպասարկման տարածքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթություն ստացող Տարածքային մակարդակի գնահատում անցած և ԿԶԱՊԿ ունեցող ճանաչված երեխաներին՝ ըստ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգով» (այսուհետ՝ ՄՀ աջակցության կարգ) սահմանված ծավալի և տևողության<sup>2</sup>: ՄՀ աջակցության ծառայությունները պլանավորվում և իրականացվում են երեխայի ԱՈւՊ-ի համաձայն:
- ✓ ՄՀ աջակցության ծառայություններ (հատուկ մանկավարժական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական) տրամադրել (անհրաժեշտության դեպքում) սպասարկման տարածքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում սովորող Կանխարգելիչ միջամտությունների պլանով աջակցություն ստացող ԿԶԱՊԿ ունեցող երեխաներին:

• Գնահատում

*Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների գնահատումը երեխայի՝ կրթական ծրագրերին մասնակցության դիտարկման, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանման գործընթացների ամբողջությունն է:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, մաս 1, 10.1 կետը*

- ✓ Իրականացնել Տարածքային մակարդակի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում,
- ✓ Հավաքագրել գնահատման դիմաձև սովորողների վերաբերյալ տեղեկատվություն,
- ✓ Գնահատված երեխաների վերաբերյալ տվյալները մուտքագրել ԿԱՊԿ ունեցող երեխաների տեղեկատվական համակարգ,

<sup>1</sup> ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի «0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 34-Ն հրաման

<sup>2</sup> ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 88-Ն հրաման

- ✓ Մասնակցել երեխայի կարիքների հիման վրա մշակվող ԱՌԻՊ-ի պլանավորման գործընթացին<sup>1</sup>:

- խորհրդատվություններ

*խորհրդատվությունը կառուցողական գրույց է, որը հիմնված է գործառույթների վրա և տևում է առնվազն 15 րոպե: Ունի նպատակ և իրենից բխող գործողություններ ու հետագա քայլեր:*

- ✓ Իրականացնել խորհրդատվություններ սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների մանկավարժների, ուսուցչի օգնականների, վարչական աշխատակիցների համար,
- ✓ Իրականացնել խորհրդատվություններ ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնողների համար,
- ✓ Իրականացնել խորհրդատվություններ սպասարկման տարածքում գործող շահագրգիռ կառույցների համար:

- Վերապատրաստում

*Վերապատրաստումը կարող է իրականացվել դասընթացի և սեմինարի միջոցով: Դասընթացը ուսուցման համակարգ է, որն ուղղված է մասնագիտական գիտելիքների հարստացմանն ու հմտությունների և կարողությունների զարգացմանը: Սեմինարը խմբի հետ գործնական պարապմունք է որևէ կոնկրետ թեմայի վերաբերյալ:*

- ✓ Իրականացնել վերապատրաստման դասընթացներ սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների մանկավարժների համար՝ ՀՄԿ-ի կողմից տրամադրված մոդուլների համաձայն,
- ✓ Իրականացնել սեմինարներ ՏՄԱԿ-ի կողմից մշակված և ՀՄԿ-ի կողմից փորձաքննություն անցած մոդուլների միջոցով:

- Մշտադիտարկում

*Մշտադիտարկումը գործընթացի որակի պարբերական դիտարկումն ու գնահատումն է: ՏՄԱԿ-ը յուրաքանչյուր եռամսյակ իրականացնում է այցեր Հաստատություն՝ ներառական կրթության կազմակերպման գործընթացը մշտադիտարկելու նպատակով:*

*Մշտադիտարկումը բաղկացած է երկու ուղղություններից՝ փաստաթղթային փաթեթի ուսումնասիրություն և սովորողին կրթական գործընթացում ներգրավման աշխատանքների դիտարկում:*

*ՏՄԱԿ-ի կողմից իրականացվող մշտադիտարկումների նպատակը սովորողի ուսումնառության ու սոցիալականացման հիմնախնդիրների վերահսկումը և ուսումնական հաստատությանը կամ սովորողի ծնողին խորհրդատվությունների տրամադրումն է:*

<sup>1</sup> Ուղեցույցում «ԱՌԻՊ» արտահայտությունը վերաբերում է նաև «ԱՌԻՉՊ» արտահայտությանը:

- ✓ Մշտադիտարկել ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնական գործընթացին ներգրավվածությունն ու մասնակցությունը,
- ✓ Մշտադիտարկել ԱՌԽՊ-ով իրականացվող աշխատանքները,
- ✓ Մշտադիտարկել ծնողների հետ և ծնողների կողմից իրականացվող աշխատանքները,
- ✓ Աջակցել հայտնաբերված կրթությունից դուրս մնացած երեխաների՝ կրթության մեջ ներգրավման գործընթացին,
- ✓ Արագ արձագանքել և համապատասխան կառույցներին տեղեկացնել երեխաների իրավունքների խախտման մասին իրենց հայտնի դարձած դեպքերի մասին:

- Բովանդակային մշակումներ

Բովանդակային մշակումները տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների կողմից ձեռնարկների, հոդվածների, ուսումնասօժանդակ նյութերի և/կամ հարմարեցված նյութերի, դիդակտիկ և խաղային պարագաների մշակումներն են:

- ✓ Մշակել սեմինարների անցկացման մոդուլներ,
- ✓ մշակել դիդակտիկ նյութեր և պարագաներ,
- ✓ մշակել ՄՀ ծառայությունների վերաբերյալ ուսումնամեթոդական հոդվածներ, էլեկտրոնային նյութեր:

ՏՄԱԿ-ը կարող է իրականացնել օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

### 1.5. Շահառուները

ՏՄԱԿ-ի պոտենցիալ շահառու են հանդիսանում սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում ընդգրկված բոլոր երեխաները, սակայն ՏՄԱԿ-ը ծառայություններ է տրամադրում մասնավորապես հետևյալ խմբերին՝

- 1) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ.
  - ✓ խոսքի և լեզվի,
  - ✓ հաղորդակցման,
  - ✓ լսողության,
  - ✓ տեսողության,
  - ✓ ինտելեկտի (մտավոր),
  - ✓ հուզական,
  - ✓ վարքի,
  - ✓ շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող երեխաներ, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող երեխաներ, որոնց հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ:

- 2) Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (այսուհետ՝ ԿԴԻՀ) երեխաներ, որոնց կյանքի դժվարին իրավիճակն անդրադառնում է նրանց զարգացման, կրթության և սոցիալականացման գործընթացների վրա՝
  - ✓ առանց ծնողական խնամքի մնացած (այսուհետ ԱԾԽՄ) երեխաներ,
  - ✓ բռնության ենթարկված երեխաներ,
  - ✓ վարքային խնդիրներ ունեցող երեխաներ,
  - ✓ սոցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներ,
  - ✓ ոստիկանությունում հաշվառված, ազատազրկման վայրից վերադարձած, պայմանական կամ այլընտրանքային պատիժ կրող երեխաներ,
  - ✓ փողոցում հայտնված՝ թափառաշրջիկ, մուրացիկ երեխաներ,
  - ✓ կրթությունից դուրս մնացած երեխաներ,
  - ✓ արտակարգ իրավիճակում հայտնված երեխաներ՝ պատերազմական իրավիճակից տուժած, ազգամիջյան կամ կրոնական հակամարտությունների, էկոլոգիական կամ տեխնածին վթարների, տարերային աղետների, թրաֆիկինգի զոհ դարձած երեխաներ, փախստականների, ապաստան հայցողների և/կամ հարկադիր տեղահանված ընտանիքների երեխաներ:
- 3) Մանկավարժներ՝
  - ✓ ուսուցիչներ
  - ✓ ն/դ մանկավարժներ,
  - ✓ ուսուցչի օգնականներ,
  - ✓ ուսումնական հաստատության վարչական անձնակազմ:
- 4) ՄՀ աջակցություն տրամադրող մասնագետներ՝
  - ✓ հոգեբան,
  - ✓ հատուկ մանկավարժ (տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենոմանկավարժ, լոգոպեդ, էրգոթերապիստ),
  - ✓ սոցիալական մանկավարժ:
- 5) Ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ:
- 6) Շահագրգիռ կառույցների մասնագետներ:


## 1.6. Շահագրգիռ կառույցները

ՏՄԱԿ-ն իր գործառույթներն իրականացնելու նպատակով համագործակցում է շահագրգիռ կառույցների հետ.

- սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատություններ՝
  - ✓ հանրակրթական ուսումնական հաստատություններ,
  - ✓ նախադպրոցական ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ ՆՈԻՀ),
  - ✓ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, քոլեջներ,
  - ✓ համալսարաններ,
- մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ՝

- ✓ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն,
- ✓ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ,
- մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներ՝
  - ✓ Կրթության վարչություն,
  - ✓ երեխաների, կանանց և ընտանիքների պաշտպանության բաժիններ,
- խնամակալության և հոգաբարձության մարմիններ,
- համալիր սոցիալական ծառայություններ, բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովներ,
- երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններ,
- ոստիկանություն,
- սպասարկման տարածքում գործող, երեխաների կրթությամբ, շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական և միջազգային կառույցներ:

ՏՄԱԿ-ի համագործակցության շրջանակը ներկայացված է գծապատկեր 1-ում:



**Գծապատկեր 1.** Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի համագործակցության շրջանակ

### 1.7. Շահառուների ընդգրկման և ուղղորդման կարգ

ՏՄԱԿ-ի շահառուները հիմնականում ուղղորդվում են սպասարկման տարածքում գործող ուսումնական հաստատությունների կողմից: ՏՄԱԿ-ը ծառայություն տրամադրում է ՄՀ աջակցության կարգով սահմանված դեպքերում հետևյալ ընթացակարգերով.

- Գնահատում

- ✓ ԿԱՊԿ տարածքային մակարդակի գնահատման նպատակով ՄՀ աջակցության կարգով սահմանված ընթացակարգով ՏՄԱԿ կարող է դիմել ուսումնական հաստատության տնօրենը՝ դիմումին կից ուղարկելով ծնողի համաձայնությունը, կամ խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի որոշման հիման վրա դիմում ներկայացնելով:
- ✓ Ծնողը կամ օրինական ներկայացուցիչն իր նախաձեռնությամբ և դիմումի համաձայն կարող է դիմել ՏՄԱԿ՝ իր երեխայի ԿԱՊԿ-ը գնահատելու նպատակով:
- ✓ ՏՄԱԿ-ը գնահատում է իրավապաշտպան կազմակերպությունների կողմից հայտնաբերված երեխաների ԿԱՊԿ-ը ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն:

- Աջակցություն

- ✓ ՏՄԱԿ-ը աջակցություն տրամադրում է տարածքային մակարդակում ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին՝ ՄՀ աջակցության կարգով սահմանված ծավալի և տևողության համաձայն:
- ✓ ՏՄԱԿ-ը ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն և կարիքի դեպքում կարող է աջակցություն տրամադրել ուսումնական հաստատության մակարդակում աջակցություն ստացող երեխաներին:
- ✓ ՏՄԱԿ-ը ՄՀ աջակցության ծառայություններ է տրամադրում ԿԴԻՀ երեխաներին, եթե նրանք ուսումնական հաստատությունում ունենում են շարունակական դժվարություններ՝ նպաստելով նրանց՝ կրթության մեջ ներառման և ուսումնական գործընթացում մասնակցության բարձրացմանը:
- ✓ ՏՄԱԿ-ը ՄՀ աջակցություն է տրամադրում երեխային նրա վերաբերյալ շահագրգիռ կառույցներից կամ համայնքի բնակիչներից համապատասխան տեղեկատվության ստացման դեպքում ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն:

- Խորհրդատվություն

- ✓ ՏՄԱԿ-ը խորհրդատվություն է տրամադրում իր սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների վարչական աշխատողներին, մանկավարժներին, մասնագետներին և ծնողներին:
- ✓ ՏՄԱԿ-ը կարող է իրեն դիմելու դեպքում խորհրդատվություն տրամադրել ոլորտում գործող կազմակերպությունների մասնագետներին:




- Վերապատրաստում
  - ✓ ՏՄԱԿ-ը վերապատրաստումներ է իրականացնում իր սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների վարչական աշխատողների, մանկավարժների, մասնագետների և ծնողների համար: Վերապատրաստումն իրականացվում է ըստ տարեկան պլանավորման, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ հայտերի հիմա վրա:
- Ուղղորդում և համագործակցություն
  - ✓ ՏՄԱԿ-ի կողմից երեխան կարող է ուղղորդվել շահագրգիռ կազմակերպություններ՝ երեխայի կրթական կարիքների գնահատման վերաբերյալ կենտրոնի մասնագետների եզրակացության հիման վրա:
  - ✓ ՏՄԱԿ-ի մասնագետները անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն են փոխանցում և համապատասխան կառույցներ ուղղորդում շահառու երեխայի ընտանիքի անդամներին՝ նրանց մոտ երեխայի հետ աշխատանքի ընթացքում հայտնաբերված կարիքների նախնական գնահատման հիման վրա:

ՏՄԱԿ-ի գործունեությունն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար ցանկալի է, որ այն ունենա հիմնական գործառույթների իրականացման համար պատասխանատու բաժիններ:

Առաջարկվում է, որ ՏՄԱԿ-ն ունենա 3 բաժին (գծապատկեր 2).

- Մանկավարժահոգեբանական աջակցության
- Գնահատման և մշտադիտարկման



- Վերապատրաստման և մեթոդական աջակցության:

**Գծապատկեր 2.** ՏՄԱԿ-ի հիմնական գործառույթներն իրականացնող բաժինները

Յուրաքանչյուր բաժնի աշխատակից ունի իր աշխատանքի նկարագիրը, որը բխում է տվյալ բաժնի գործառույթներից<sup>1</sup>:

Բաժիններում աշխատակիցների թվակազմը կարգավորում է ՏՄԱԿ-ի տնօրենը՝ ելնելով սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների և շահառուների քանակից, ինչպես նաև աշխատանքների ծավալից:

**2.1. Մանկավարժահոգեբանական աջակցության բաժնի գործառույթները**

ՏՄԱԿ-ի ՄՀ ծառայությունների տրամադրման բաժնի գործառույթը ԿԱՊԿ ունեցող երեխաներին, նրանց ծնողներին, ինչպես նաև կրթության ոլորտում աշխատող

<sup>1</sup> ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշում

մասնագետներին ՄՀ ծառայությունների վերաբերյալ աջակցության և խորհրդատվության տրամադրումն է:

Բաժնի հիմնական գործառույթներն են՝

1. ՏՄԱԿ-ի շահառու հանդիսացող ԿԱՊԿ ունեցող երեխաներին ՄՀ ծառայությունների տրամադրում.
2. ՏՄԱԿ-ի շահառու ԿԱՊԿ ունեցող երեխաներին տրամադրվող ՄՀ ծառայությունների վերաբերյալ փաստաթղթերի վարում, այդ թվում Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ԿԱՊԿ ունեցող երեխաների Տեղեկատվական համակարգում.
3. ՏՄԱԿ-ի շահառու ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնողներին խորհրդատվության տրամադրում.
4. ՏՄԱԿ-ի սպասարկման տարածքի նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մասնագետների, աշխատակիցների համար մասնագիտական աջակցության և պլանային ու ընթացիկ խորհրդատվությունների իրականացում.
5. ՏՄԱԿ-ի կողմից սեմինարների անցկացման համար Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի աշխատակիցների հետ համատեղ մոդուլների մշակում.
6. ՏՄԱԿ-ի սպասարկման տարածքի նախադպրոցական հաստատությունների և դպրոցների ՄՀ աջակցություն տրամադրող թիմի անդամների միջև հանդիպում-քննարկումների իրականացում.
7. ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացի բարելավմանը և մասնագետների կարողությունների զարգացմանը միտված ուսումնասօժանդակ հոդվածների ու դիդակտիկ պարագաների մշակման նպատակով ՏՄԱԿ-ի մյուս բաժինների հետ համատեղ աշխատանքների իրականացում.
8. Առաջավոր փորձ ունեցող մասնագետների հետ համատեղ փորձի փոխանակման աշխատանքների կազմակերպում.
9. ԿԱՊԿ ունեցող երեխաներին ՄՀ աջակցության տրամադրման գործընթացի և ձևաթղթերի վերանայման ու մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
10. Ուսումնական հաստատությունների կողմից ԿԱՊԿ ունեցող երեխաներին տրամադրվող ՄՀ աջակցության ծառայությունների վերաբերյալ ուսումնասիրությունների, մշտադիտարկման և վերլուծությունների իրականացում.
11. ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական աշխատանքների իրականացում.
12. Անհրաժեշտության դեպքում այլ կառույցների կողմից կազմակերպվող և ՏՄԱԿ-ի շահառուներին վերաբերող քննարկումներին ու այլ միջոցառումներին մասնակցություն.
13. Բաժնի աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների (վերապատրաստման դասընթացներ, փորձի փոխանակման այցեր և այլն) կազմակերպում.

14. Կենտրոնի մյուս բաժինների գործառույթների իրականացման համար աջակցության տրամադրում.
15. Կենտրոնի կողմից իրականացվող գործընթացների և ծրագրերի շրջանակներում թիմային աշխատանքի ապահովում:

## **2.2. Գնահատման և մշտադիտարկման բաժնի գործառույթները**

ՏՄԱԿ-ի Գնահատման և մշտադիտարկման բաժնի ուղղակի գործառույթը երեխայի ԿԱՊԿ գնահատման, սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում ՄՀ աջակցության տրամադրման ընթացքի մշտադիտարկման, տվյալների հավաքագրման, համակարգման և վերլուծությունների իրականացումն է:

### Բաժնի հիմնական գործառույթներն են՝

1. ՏՄԱԿ դիմած շահառուների Տարածքային մակարդակի գնահատում և գնահատման եզրակացության տրամադրում.
2. ՏՄԱԿ-ի կողմից գնահատված ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին տեղեկատվության մուտքագրում Տեղեկատվական համակարգ.
3. Գնահատման արդյունքների հիման վրա ուսումնական հաստատության կողմից ԱՌԻՊ/ԱՌԻԶՊ-ի մշակման գործընթացում աջակցության տրամադրում.
4. Ուսումնական հաստատության մակարդակի գնահատման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում.
5. Գնահատման գործընթացին վերաբերող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրում ուսումնական հաստատությունների մանկավարժներին.
6. Ուսումնական հաստատության՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներին համապատասխան պայմանների ապահովվածության մշտադիտարկում.
7. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (այսուհետ՝ ԿՏԱԿ) կողմից դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում ԿԱՊԿ ունեցող երեխաների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության մշտադիտարկում և, դպրոցների հետ համագործակցությամբ, տվյալների ճշգրտում.
8. Գնահատման համար կիրառվող գործիքների և գործընթացի վերաբերյալ մեթոդական առաջարկությունների ներկայացում.
9. ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացների և ձևաթղթերի վերանայման ու մշակման աշխատանքներում առաջարկությունների և դիտարկումների ներկայացում.
10. Գնահատման համար կիրառվող գործիքների մշակման և փորձարկման գործընթացներում ներգրավվածություն.
11. Գնահատման գործընթացի վերաբերյալ ուսումնասիրությունների, մշտադիտարկումների և վերլուծությունների իրականացում.
12. Բաժնի աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների (վերապատրաստման դասընթացներ, փորձի փոխանակման այցեր և այլն) կազմակերպում.

13. Կենտրոնի մյուս բաժինների գործառույթների իրականացման հարցում աջակցության տրամադրում.
14. Կենտրոնի կողմից իրականացվող գործընթացների և ծրագրերի շրջանակներում թիմային աշխատանքի ապահովում:
15. Անհրաժեշտության դեպքում այլ կառույցների կողմից կազմակերպվող և ՏՄԱԿ-ի շահառուներին վերաբերող քննարկումներին ու այլ միջոցառումներին մասնակցություն:

### **2.3. Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի գործառույթները**

ՏՄԱԿ-ի Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի ուղղակի գործառույթը ուսումնական հաստատությունների մանկավարժների և սովորողների ծնողների կարողությունների զարգացմանը նպաստելն է:

#### Բաժնի հիմնական գործառույթներն են՝

1. Պլանային և ընթացիկ վերապատրաստումների իրականացում ՏՄԱԿ-ին ամրակցված ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժական աշխատողների համար.
2. Սեմինարների համար մոդուլների մշակում և դրանց համապատասխան սեմինարների անցկացում ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների, ինչպես նաև սովորողների ծնողների համար.
3. ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացի բարելավմանը և մասնագետների կարողությունների զարգացմանը միտված ուսումնաօժանդակ հոդվածների, դիդակտիկ խաղերի, նյութերի մշակում.
4. ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության գործընթացում կիրառվող գործիքակազմի և ձևաթղթերի (գնահատման գործիքներ, եզրակացություն, անհատական ուսուցման պլան, մշտադիտարկում և այլն) վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
5. ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում.
6. Կենտրոնի ստորաբաժանումների մասնագետներին մեթոդական աջակցության և մասնագիտական խորհրդատվության տրամադրում.
7. Մասնագիտական նյութերի մշակման աշխատանքներին մասնակցություն՝ ըստ անհրաժեշտության.
8. Փաստաթղթերի լրացում և պարբերական գրառումների ու դիտարկումների իրականացում.
9. ՏՄԱԿ-ի մյուս բաժինների գործառույթների իրականացման հարցում աջակցության տրամադրում.
10. ՏՄԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների և ծրագրերի շրջանակներում թիմային աշխատանքի ապահովում.

11. Անհրաժեշտության դեպքում այլ կառույցների կողմից կազմակերպվող և ՏՄԱԿ-ի շահառուներին վերաբերող քննարկումներին ու այլ միջոցառումներին մասնակցություն:

#### **2.4. Արտակենտրոն ծառայություններ տրամադրող մասնագետների աշխատանքի կազմակերպումը**

Այն ՏՄԱԿ-ները, որոնք սպասարկում են ամբողջ մարզը և սպասարկման տարածքում ունեն 50 կմ և ավելի հեռավորության վրա գտնվող համայնքների ուսումնական հաստատություններ, կարող են սլյալ տարածքի սպասարկման համար ՏՄԱԿ-ի աշխատակիցներ ունենալ այդ բնակավայրերից: Դա հնարավորություն կտա ՏՄԱԿ-ին խնայել ռեսուրսներ ինչպես ճանապարհածախսի, այնպես էլ ժամանակի առումով և առավել արդյունավետությամբ կազմակերպել աշխատանքները:

Արտակենտրոն ծառայություն տրամադրող մասնագետների համար աշխատանքային միջավայր ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում իրենց կողմից սպասարկվող տարածքի՝ առավել հարմարավետ պայմաններ ունեցող և համապատասխան կահավորված ռեսուրս սենյակ ունեցող դպրոցներից մեկում հատկացնել տարածք, որտեղ նրանք կկարողանան իրականացնել իրենց աշխատանքները, վարել թղթաբանությունը: Ուսումնական հաստատության ընտրությունը և համապատասխան աշխատանքային տարածքի հատկացումն հնարավոր է իրականացնել մարզպետարանի կրթության բաժնի հետ համապատասխան պայմանավորվածության արդյունքում:

Իրականացրած աշխատանքների ընթացքի, արդյունքների ու աշխատանքային ընթացիկ հարցերի քննարկման նպատակով արտակենտրոն ծառայություններ տրամադրող մասնագետները շաբաթական մեկ անգամ, ըստ նախապես սահմանված գրաֆիկի՝ այցելում են ՏՄԱԿ:

Ուսումնական հաստատություններում ՏՄԱԿ-ի մասնագետների աշխատանքը ցանկալի է կազմակերպել ուսումնական հաստատությունների ռեսուրս-սենյակներում, որոնց կահավորմանը ներկայացվող պահանջները ներկայացված են հավելված 22-ում:

**3.1. Գնահատում**

ՏՄԱԿ-ի Գնահատման և մշտադիտարկման բաժնի գործառույթը երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացի իրականացումն է:

Երեխայի ԿԱՊԿ *Տարածքային մակարդակի գնահատում* իրականացնելու նպատակով ուսումնական հաստատության կողմից դիմում ստանալուց հետո ՏՄԱԿ-ի տնօրենի հրամանով ձևավորվում է գնահատող մասնագետների խումբը և սկսվում է գնահատման գործընթացը՝ ըստ հետևյալ քայլերի հաջորդականության.

1. ՏՄԱԿ-ի սոցիալական մանկավարժը/աշխատողը հավաքագրում է սովորողին կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ներկայացնելու համար հանրակրթական ուսումնական հաստատության տնօրինության կողմից կազմված հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝

- ուսումնական հաստատության դիմումը՝ կից՝ ծնողի համաձայնությամբ.
- ծնողի անձնագրի և երեխայի ծննդյան վկայականի պատճենը.
- սովորողի հանրային ծառայության համարանիշը.
- սովորողի՝ ուսումնառության ընթացքում արձանագրված կայուն դժվարությունների.
- ինչպես նաև հայտորոշիչ և ձևավորող գնահատման ընթացքում հավաքագրած տեղեկատվության ամփոփ նկարագրությունը.
- առկայության դեպքում՝ սովորողի հայտորոշիչ և ձևավորող գնահատման արձանագրությունները.
- այլ փաստաթղթեր, որոնք, ըստ ուսումնական հաստատության կամ ծնողի հայեցողության, կարող են սովորողի մասին օգտակար տեղեկատվություն տրամադրել:

Ուսումնական հաստատության դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ստանալուց հետո, առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում, տարածքային կենտրոնը նշանակում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը սկսելու օրը, որի մասին նախօրոք տեղեկացնում է ուսումնական հաստատությանը:

Տարածքային կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում է տվյալ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող մանկավարժական աշխատողների խումբ (Գնահատող խումբ): Գնահատող խումբը ներառում է տարածքային կենտրոնի առնվազն երկու մանկավարժ (հատուկ մանկավարժ և սոցիալական մանկավարժ) և մեկ հոգեբան: Ըստ անհրաժեշտության Գնահատող խումբում կարող են ներգրավված լինել նաև այլ մանկավարժներ և մասնագետներ: Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացում ներգրավված են նաև ուսումնական հաստատության ուսուցիչները, այլ մանկավարժական աշխատողները, սովորողը և նրա ծնողը:

Ուսումնական հաստատությունում սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տևում է 5-ից 25 աշխատանքային օր: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ավարտից հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, Գնահատող խումբը սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ կազմում է արձանագրություն և տալիս եզրակացություն: Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արձանագրությունը և եզրակացությունը հաստատում է Տարածքային կենտրոնի տնօրենը: Արձանագրության և եզրակացության բնօրինակը Տարածքային կենտրոնը տրամադրում է սովորողի ծնողին, իսկ պատճենը՝ ուսումնական հաստատություն:

Ներկայացված փաստաթղթերով և ձևաթղթերով, ինչպես նաև երեխայի ԿԱՊԿ Տարածքային մակարդակի գնահատման արդյունքներով (Գնահատման եզրակացություն և արձանագրություն), կազմվում է երեխայի գնահատման գործի անհատական թղթապանակը, որը պահպանվում է ՏՄԱԿ-ում՝ արխիվացված տարբերակով կամ մուտքագրվում է ԿԱՊԿ ունեցող երեխաների տեղեկատվական համակարգ<sup>1</sup>: Գնահատման եզրակացությունը և արձանագրությունը համակարգված ձևով պահպանվում են նաև էլեկտրոնային տարբերակով՝ ՏՄԱԿ-ի Գնահատման և մշտադիտարկման բաժնի համակարգիչներում<sup>2</sup>:

ԿԱՊԿ գնահատման գործընթացի վերաբերյալ Գնահատման և մշտադիտարկման բաժինը ուսումնական հաստատություններում իրականացնում է խորհրդատվություններ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվում է հետևյալ փաստաթղթերում.

1. «Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացի վերաբերյալ խորհրդատվությունների գրանցամատյան», որտեղ մուտքագրվում է Գնահատման և մշտադիտարկման բաժնի կողմից շահառու հանդիսացող անձանց (ծնողներ/խնամակալներ, մանկավարժներ, ՄՀ աջակցության թիմ, շահագրգիռ կազմակերպություններ) տրամադրված խորհրդատվությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի *Ուսումնական հաստատության մակարդակի գնահատման գործընթացին* ՏՄԱԿ-ն անմիջական մասնակցություն չի ունենում, սակայն Գնահատման և մշտադիտարկման բաժինն իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատություններում «Սովորողի ուսումնառության արդյունքների նկարագրի» լրացման վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում ՏՄԱԿ-ի շահառու հանդիսացող անձանց (սովորողներ, ծնողներ/խնամակալներ, մանկավարժներ, ՄՀ աջակցության թիմ, շահագրգիռ կազմակերպություններ): Վերոհիշյալ խորհրդատվությունը, այդ

<sup>1</sup> Տեղեկատվական համակարգը դեռևս չի գործարկվում, սակայն նշված տվյալները մուտքագրվում են ՀՄԿ-ի կողմից ՏՄԱԿ-ներին տրամադրված Excel ձևաչափով կազմված փաստաթղթում:

<sup>2</sup> Մինչև տեղեկատվական համակարգի գործարկումը:



թվում նաև Տարածքային մակարդակի գնահատման խորհրդատվությունների վերաբերյալ տեղեկատվությունը, բաժնի մասնագետները լրացնում են «Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրման թերթիկում» (հավելված 10), իսկ բաժնի ղեկավարը այդ տեղեկատվությունը մուտքագրում է «Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրման էլեկտրոնային գրանցամատյան» (հավելված 13):

Երեխայի ԿԱՊԿ գնահատման գործընթացի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը լրացվում է ՏՄԱԿ-ի Գնահատման և մշտադիտարկման բաժնի էլեկտրոնային գրանցամատյանում, որը վարում է բաժնի ղեկավարը (հավելված 4): Էլեկտրոնային գրանցամատյանի հիման վրա կազմվում են բաժնի ամսական և եռամսյակային հաշվետվությունները:

Բաժինը յուրաքանչյուր ամսվա վերջում՝ ամսական ներքին հաշվետվությունների<sup>1</sup> տեսքով տեղեկատվություն է փոխանցում ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալին իր կատարած գործողությունների վերաբերյալ:

### **3.2. Աջակցություն**

Կրթության կազմակերպման ՄՀ աջակցության ծառայությունները տրամադրվում են ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության բաժնի կողմից՝ հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալ-մանկավարժական ծառայությունների տեսքով: Տարածքային աջակցության ծառայությունների կազմակերպման և Տարածքային խմբի աշխատանքների համակարգման պատասխանատուն *տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալն է:*

ԿԱՊԿ ունեցող երեխաներին ՄՀ աջակցության ծառայություններ տրամադրվում են Տարածքային մակարդակում՝ սովորողին տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակի, տևողության ու ծավալի համաձայն:

ՄՀ աջակցության ծառայությունները տրամադրվում են սովորողին ուսումնական հաստատությունում, դասերից հետո, իսկ ծնողի դիմումի հիման վրա՝ նաև տարածքային կենտրոնում: Այն դեպքում, երբ երեխան գնահատվել է Տարածքային մակարդակում, ունի ՄՀ աջակցության կարիք, սակայն որևէ ՆՈՒՀ չի հաճախում, Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են երեխայի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա:

ՏՄԱԿ-ի կողմից ուսումնական հաստատության ուսուցիչներին և մանկավարժական թիմին տրամադրվում է աջակցություն հետևյալ ուղղություններով.

---

<sup>1</sup> Հաշվետվությունները վարվում են Excel ձևաչափով:

1) Սովորողի ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով իրականացվում է սովորողի առաջընթացի, դասաժամերին նրա ներգրավվածության և մասնակցության դիտարկում:

2) Սովորողի հետ աշխատող մանկավարժներին (Հաստատության խումբ) տրամադրվում է խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն սովորողի ուսումնական նյութերի հարմարեցումների, դասի պլանավորման, սովորողի մասնակցությունը խթանող դասավանդման մեթոդների, դասարանում սովորողի նստելու տեղի, առաջադրանքների հանձնարարման ու կատարման ձևերի ընտրության, դասընկերների հետ սոցիալական հարաբերությունների և շփումների խթանման հարցերում:

3) Խորհրդատվություն և գործնական աջակցություն է տրամադրվում սովորողի հետ աշխատող մանկավարժներին՝ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքին համապատասխան, առաջադրանքի, թեստերի, գիտելիքների ստուգման, գնահատման ու ժամանակի պլանավորման խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով:

4) Խորհրդատվություն է տրամադրվում երկարօրյա խմբերում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատող մանկավարժներին՝ դասապատրաստման, ինքնուրույն սովորելու հմտությունների ձևավորման ու զարգացման հարցերում:

5) Խորհրդատվություն է տրամադրվում սովորողի ծնողին սովորողի ուսումնառության արդյունավետության բարձրացման, առկա դժվարությունների հաղթահարման և սոցիալական ու կենցաղային հմտությունների զարգացման ուղղություններով:

ՏՄԱԿ-ի շահառու հանդիսացող անձանց տրամադրվող ՄՀ ծառայությունների վերաբերյալ ՏՄԱԿ-ը իրականացնում է հետևյալ փաստաթղթավարումը.

1. «Երեխային տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների էլեկտրոնային գրանցամատյան» (հավելված 5), որտեղ մուտքագրվում են ՏՄԱԿ-ի շահառու հանդիսացող երեխաներին տրամադրվող ՄՀ ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ: Երեխային տրամադրվող ՄՀ աջակցության ծառայությունները ՏՄԱԿ-ի, ինչպես նաև ուսումնական հաստատության կողմից իրականացվում են ԱՈՒՊ/ԱՈՒԶՊ ձևաթղթերում:
2. Երեխայի ԱՈՒՊ/ԱՈՒԶՊ-ում նշված ժամանակացույցին համապատասխան ՏՄԱԿ-ի մասնագետների այցերն ուսումնական հաստատություն արձանագրվում են «Ուսումնական հաստատությունում ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից աջակցության ծառայությունների տրամադրման ժամանակացույց» ձևաթղթում (հավելված 6):
3. «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրման գրանցամատյան», որտեղ ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության բաժինը մուտքագրում է շահառու հանդիսացող անձանց (սովորողներ, ծնողներ/խնամակալներ, մանկավարժներ, ՄՀ աջակցության

թիմ, շահագրգիռ կազմակերպություններ) իր կողմից տրամադրված խորհրդատվությունների վերաբերյալ տեղեկատվությունը (հավելված 14)՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման գործընթացների վերաբերյալ խորհրդատվությունների թերթիկի» հիման վրա (հավելված 11):

Երեխաներին տրամադրվող ՄՀ աջակցության ծառայությունների վերաբերյալ հավաքագրված ողջ տեղեկատվությունը ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման բաժնի համապատասխան աշխատակիցը 10-օրյա ժամկետում մուտքագրում է ԿԱՊԿ ունեցող երեխաների Տեղեկատվական համակարգ<sup>1</sup>:

Բաժինը յուրաքանչյուր ամսվա վերջում ամսական հաշվետվությունների<sup>2</sup> տեսքով տեղեկատվություն է փոխանցում ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալին իր կատարած գործողությունների վերաբերյալ:

### **3.3. Մշտադիտարկում**

ՏՄԱԿ-ը յուրաքանչյուր եռամսյակ իրականացնում է այցեր հաստատություն՝ Ուսումնական հաստատության և Տարածքային մակարդակում իրականացվող ԿԱՊԿ գնահատման և ՄՀ աջակցության ծառայությունները մշտադիտարկելու նպատակով (փաստաթղթային փաթեթ և իրականացվող աշխատանքներ): Մշտադիտարկումներն իրականացվում են ՏՄԱԿ-ի տնօրենի հրամանով ձևավորված մշտադիտարկման խմբի կողմից, ինչպես ուսումնական գործընթացում երեխայի մասնակցությունը գնահատելու, այնպես էլ հաստատության ՄՀ աջակցության խմբի մասնագետների կողմից իրականացվող աշխատանքներն ուսումնասիրելու նպատակով (հավելված 8): Մշտադիտարկման խումբը իրականացված մշտադիտարկումների վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրում է «Մշտադիտարկումների էլեկտրոնային գրանցամատյան» (հավելված 9):

Մշտադիտարկման գործընթացի վերլուծությունը ՏՄԱԿ-ի տնօրինությանը ներկայացվում է հաշվետվության տեսքով, որի արդյունքում մշակվում են հաստատության հետագա խորհրդատվական աշխատանքների ուղղությունները:

### **3.4. Խորհրդատվություն**

ՏՄԱԿ-ը իր սպասարկման տարածքում խորհրդատվություններ է տրամադրում սովորողների ծնողներին, ուսուցիչներին, ուսուցչի օգնականներին, մասնագետներին, վարչական աշխատակազմին: Խորհրդատվությունները տրամադրվում են ՏՄԱԿ-ի կողմից ոչ միայն պլանային ձևաչափով, այլև ըստ անհրաժեշտության՝ հայտերի հիման վրա (հավելված 3):

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման

<sup>1</sup> Տեղեկատվական համակարգը դեռևս չի գործարկվում, սակայն նշված տվյալները մուտքագրվում են ՀՄԿ-ի կողմից ՏՄԱԿ-ներին տրամադրված Excel ձևաչափով կազմված փաստաթղթում:

<sup>2</sup> Հաշվետվությունները վարվում են Excel ձևաչափով:

գործընթացի վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրումն իրականացվում է ՏՄԱԿ-ի Գնահատման և մշտադիտարկման բաժնի կողմից և արձանագրվում է համապատասխան թերթիկում (հավելված 10):

Մասնագիտական աջակցության հետ կապված պլանային ու ընթացիկ խորհրդատվություններն իրականացվում են ՄՀ ծառայությունների տրամադրման բաժնի կողմից և արձանագրվում համապատասխան թերթիկում (հավելված 11):

Երեխայի ԿԱՊԿ գնահատման և ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման կարգի, ընթացակարգերի և գործընթացների իրականացման վերաբերյալ պլանային և ընթացիկ խորհրդատվություններն իրականացնում է Վերապատրաստման և խորհրդատվությունների տրամադրման բաժինը և արձանագրում դրանք համապատասխան թերթիկում (հավելված 12):

### 3.5. Վերապատրաստում

Ուսուցիչների, մանկավարժական այլ աշխատողների, ՄՀ աջակցության թիմի մասնագիտական կարողությունների զարգացումը, ինչպես նաև ծնողավարման հմտությունների զարգացման հետ կապված դասընթացներն իրականացվում են ՏՄԱԿ-ի Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի կողմից:

Բաժինն իրականացնում է պլանային վերապատրաստումներ ՀՄԿ-ի կողմից մշակված և առաջարկված մոդուլային դասընթացների հիման վրա, ինչպես նաև չպլանավորված սեմինարներ՝ ըստ կարիքի և անհրաժեշտության (հայտերի հիման վրա, հավելված 2)՝ *նախապես ՀՄԿ-ի Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի փորձագիտական կարծիքին ներկայացնելով սեմինարների մոդուլային դասընթացները:*

Վերապատրաստման դասընթացների և սեմինարների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվում է ՏՄԱԿ-ի Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի համար նախատեսված էլեկտրոնային գրանցամատյանում (հավելված 7):

Բացի վերապատրաստման գործառույթից բաժինն ունի այլ գործառույթներ, որոնց իրականացումը ենթադրում է հետևյալ փաստաթղթերի վարում.

1. «ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման կարգի, ընթացակարգերի և գործընթացների իրականացման վերաբերյալ խորհրդատվությունների էլեկտրոնային գրանցամատյան», որտեղ մուտքագրվում են շահառու հանդիսացող անձանց (սովորողներ, ծնողներ/խնամակալներ, մանկավարժներ, ՄՀ աջակցության թիմ, շահագրգիռ կազմակերպություններ) Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի կողմից տրամադրված խորհրդատվությունների վերաբերյալ տեղեկատվությունը (հավելված 15)՝ «ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման կարգի, ընթացակարգերի և գործընթացների իրականացման վերաբերյալ խորհրդատվությունների թերթիկի» հիման վրա (հավելված 12):
2. «Մեթոդական մշակումների էլեկտրոնային գրանցամատյան», որտեղ

մուտքագրվում են բաժնի և ՏՄԱԿ-ի այլ բաժինների մասնագետների կողմից բովանդակային նյութերի և դիդակտիկ խաղերի, պարագաների մշակման վերաբերյալ բոլոր տվյալները (հավելված 16):

3. Բաժինը յուրաքանչյուր ամսվա վերջում ամսական հաշվետվությունների<sup>1</sup> տեսքով տեղեկատվություն է փոխանցում ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալին իր կատարած գործողությունների վերաբերյալ:

### **3.6. Մեթոդական մշակումներ**

Երեխայի կրթության իրականացման գործընթացում կրթական ծառայությունների մատչելիությունը, արդյունավետությունը և մասնակցային հնարավորությունները մեծացնելու նպատակով ուսումնական, ուսումնասօժանդակ, դիդակտիկ նյութերի ու պարագաների մշակումը և ՏՄԱԿ-ի այլ բաժինների մասնագետների կողմից նմանօրինակ նյութերի մշակման հարցում մասնագիտական աջակցության տրամադրումն իրականացվում է Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի կողմից:

Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժինը բովանդակային նյութերի և դիդակտիկ պարագաների մշակման և ՏՄԱԿ-ի այլ բաժինների մասնագետների կողմից նմանօրինակ նյութերի մշակման վերաբերյալ բոլոր տվյալները գրանցում է «Մեթոդական մշակումների էլեկտրոնային գրանցամատյանում» (հավելված 16):

---

<sup>1</sup> Հաշվետվությունները վարվում են Excel ձևաչափով:

**4.1. Տարեկան պլանավորում**

ՏՄԱԿ-ների տարեկան պլանը գործառնական պլան է, որը մատնանշում է մեկ տարվա ընթացքում տվյալ ՏՄԱԿ-ի գործունեության նպատակները, խնդիրները և պարունակում մանրամասն ծրագիր, որում նշվում է, թե ինչ գործունեություն պետք է իրականացվի, երբ և ում կողմից:

ՏՄԱԿ-ները իրենց կենտրոնի գործունեությունը պլանավորելիս պետք է հիմնվեն հետևյալ առանցքային կետերի վրա.

- մշտապես ելակետ ունենալ կենտրոնի գործունեության նպատակները
- հաջորդ տարվա համար պլանավորել գործողությունները՝ ելնելով նախորդ տարիների փորձից,
- հաշվի առնել ոչ միայն ցանկությունները, այլև կենտրոնի ռեսուրսները,
- սահմանել իրատեսական և չափելի թիրախներ կամ նպատակներ,
- պլանավորել աշխատանքը կենտրոնի թիմով,
- հաշվի առնել բոլոր հնարավոր ռիսկերը,
- չվախենալ խնդիրներից, գտնել այլընտրանքային լուծումներ:

Ինչպե՞ս է մշակվում ՏՄԱԿ-ի տարեկան պլանը:

Տարեկան պլանը մշակելիս կարևոր է իրականացնել կոնկրետ քայլեր.

- ամփոփել անցնող տարվա ձեռքբերումները, ընդգծել հիմնական հաջողությունները,
- վեր հանել հիմնական խնդիրները,
- նախանշել հիմնական նպատակներն ըստ գործունեության ոլորտների, հաշվի առնել քաղաժ դասերը և համատեքստը,
- որոշել, թե նպատակների իրականացման համար կենտրոնի որ բաժինն է պատասխանատու (թիմը պետք է տեղյակ լինի բոլոր միջոցառումների ու նպատակների մասին),
- յուրաքանչյուր ռազմավարական նպատակի և խնդրի համար որոշել, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկել տվյալ տարվա ընթացքում՝ այդ նպատակին հասնելու համար (ո՞վ է պատասխանատու, ի՞նչ միջոցներ են պահանջվում, ինչ ցուցանիշներով ու չափման միավորներով է գնահատվելու հաջողությունը),
- սահմանել, թե ինչ գործողություններ են պետք, որպեսզի աշխատանքը կատարվի, ինչպես նաև՝ ինչ մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսներն են պահանջվում: Անհրաժեշտ է ձևակերպել այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն ՏՄԱԿ-ի կողմից անհրաժեշտ ռեսուրսները մատչելի դարձնելու համար:
- հաշվի առնելով, որ յուրաքանչյուր կազմակերպություն իր մատչելի ռեսուրսների որոշակի սահմանափակումների է բախվում, ընտրություն

կատարել այն հարցում, թե յուրաքանչյուր գործունեություն երբ է իրականացվելու և ինչ ծավալով (տե՛ս ՏՄԱԿ-ի տարեկան ծրագրի աղյուսակ):

- բաշխել նպատակներն ըստ եռամսյակների և ամիսների՝ հաշվի առնելով ՏՄԱԿ-ի աշխատանքի սեզոնային բնույթը:

Տարեկան պլանի մշակումը մասնակցային գործընթաց է, այն չպետք է կազմվի միանձնյա: Սակայն տարեկան պլանի կատարողականը մշտադիտարկելու համար պետք է պատասխանատու լինի մեկ կամ երկու անձ:

Հավելված 1-ում ներկայացված է ՏՄԱԿ-ի գործունեության տարեկան պլանի օրինակելի ձևը:

## **4.2. Հաշվետվությունների կազմում**

### **4.2.1 ՏՄԱԿ-ի բաժինների կողմից ներկայացվող ներքին հաշվետվություններ**

ՏՄԱԿ-ն իր կողմից իրականացված աշխատանքները համակարգելու, գործառույթներն իրականացնելու ընթացքում հանդիպած դժվարություններն ու խոչընդոտները վերհանելու և կարևորագույն ձեռքբերումներն առանձնացնելու, ինչպես նաև բաժինների կողմից կատարված աշխատանքը գնահատելու նպատակով տարվա յուրաքանչյուր ամսվա համար կազմում է ներքին հաշվետվություններ:

Ներքին հաշվետվությունները կազմվում են յուրաքանչյուր բաժնի աշխատանքների համար և համակարգվում տվյալ բաժնի ղեկավարի կողմից համապատասխան փաստաթղթում (հավելված 17): Ներքին հաշվետվությունները վարվում են Excel ձևաչափով:

### **4.2.2 ՀՄԿ ներկայացվող ամսական հաշվետվություններ**

ՏՄԱԿ-ը յուրաքանչյուր ամսվա աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրում է ՀՄԿ-ի կողմից առաջարկված հաշվետվությունների ձևաթղթում, որը մինչև հաջորդող ամսվա 5-րդ օրը ներկայացնում է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն: Ամսական հաշվետվությունները ևս վարվում և ներկայացվում են Excel ձևաչափով (հավելված 18):

### **4.2.3 ԿԳՄՍ նախարարություն ներկայացվող եռամսյակային և տարեկան հաշվետվություններ**

ՏՄԱԿ-ն իր կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է ԿԳՄՍ նախարարությանը և ՀՄԿ-ին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների տեսքով: Հաշվետվությունները ներկայացվում են երկու ձևաչափով՝ քանակական (հավելված 19) և բովանդակային:

Բովանդակային ձևաչափով հաշվետվության մեջ նկարագրվում են ՏՄԱԿ-ի կողմից իրականացված հիմնական աշխատանքներն ըստ գործառույթների՝ առավելագույնը 5 էջի սահմաններում: Նշվում են նաև ՏՄԱԿ-ում արձանագրված փոփոխությունները, մասնագիտական, կառույցների և տեխնիկայի ձեռքբերումների

համալրումները, ինչպես նաև գործառույթներն իրականացնելու ընթացքում հանդիպած դժվարություններն ու խոչընդոտները (օր.՝ մասնագետների պակաս, դպրոցների/մանկապարտեզների, ծնողների իրազեկվածության պակաս, համագործակցության ցանկության պակաս, ընթացակարգերի բարդություն, տրանսպորտային միջոցների, ռեսուրսների պակաս և այլն), համապատասխան եզրահանգումները՝ ինչն էր կարելի այլ կերպ անել, ինչ նոր ռազմավարությամբ կարելի է աշխատել հաջորդ տարվա ընթացքում:



**5.1. Հաստիքացուցակ**

Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) անձնակազմը կազմված է մանկավարժահոգեբանական և ոչ մանկավարժահոգեբանական հաստիքներից և ընդհանուր առմամբ կարող է ունենալ մինչև 10 (տասը) մանկավարժահոգեբանական ծառայության մասնագետ և ոչ մանկավարժահոգեբանական անձնակազմի հաստիք:

ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1091-Ն որոշման համաձայն՝ ՏՄԱԿ-ի անձնակազմի հաստիքների թիվը կարգավորվում է ՏՄԱԿ-ների ֆինանսավորման կարգով, ըստ որի՝ ՏՄԱԿ-ները բաժանվում են 3 տիպի՝ փոքր, միջին, մեծ:

- ✓ Փոքր համարվում են այն ՏՄԱԿ-ները, որոնց ամրակցված ուսումնական հաստատություններում սովորողների թիվը մինչև 10000 է:
- ✓ Միջին համարվում են այն ՏՄԱԿ-ները, որոնց ամրակցված ուսումնական հաստատություններում սովորողների թիվը 10000-25000 է:
- ✓ Մեծ համարվում են այն ՏՄԱԿ-ները, որոնց ամրակցված ուսումնական հաստատություններում սովորողների թիվը 25000-ից ավելի է:

Հավելված 20-ում ներկայացվում է կենտրոնի մասնագիտական աշխատակազմի օրինակելի հաստիքացուցակը:

ՏՄԱԿ-ի մասնագետներն աշխատում են լրիվ դրույքով (շաբաթը 5 օր), կենտրոնում մասնագետների հաստիքների քանակը որոշվում է սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատությունների սովորողների թվով: Յուրաքանչյուր մասնագետ ամսական սպասարկում է առնվազն 12-15 շահառուի, հետևաբար ըստ կենտրոնի և տվյալ ծառայության կարիքն ունեցող շահառուների թվի կարելի է որոշել կենտրոնում տվյալ մասնագիտությամբ մասնագետների թիվը:

**5.2. Աջակցության սենյակների կահավորում**

ՏՄԱԿ-ի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության աշխատակիցների աշխատանքներն առավել հարմարավետ պայմաններում կազմակերպելու նպատակով ցանկալի է, որ դրանք կահավորված լինեն տվյալ մասնագետի աշխատասենյակին ներկայացվող ժամանակակից պահանջներին համապատասխան: Ստորև ներկայացվում են մասնագիտական աշխատասենյակներին ներկայացվող պահանջները:

**5.2.1. Հատուկ մանկավարժի աջակցության սենյակ**

Հատուկ մանկավարժական աջակցության սենյակի չափը պետք է բավարար լինի չորս հիմնական գոտիներ կազմակերպելու համար՝ կրթական, խաղային, զարգացնող և շարժողական ակտիվության: Սենյակի ընդհանուր տարածքը պետք է կազմի 25-30քմ:

Հատուկ մանկավարժական աջակցության սենյակի կառուցվածքում կարևոր դեր են խաղում սենյակի տարածքը, կահավորումը, սարքավորումներն ու դիդակտիկ պարագաները: Սենյակը պետք է ապահովված լինի օդափոխության և ջեռուցման համակարգերով, համապատասխան լուսավորությամբ: Կարևոր է, որ սենյակի պատերի գույները համապատասխանեն ընդունված նորմերին. ուսումնական հատվածում դրանք պիտի լինեն բաց երանգներով՝ ուշադրություն չգրավող, իսկ խաղային տարածքում կարելի է ունենալ ավելի վառ գույներ:

Սենյակը պետք է ունենա առանձին տարածք խմբային աշխատանքներ կազմակերպելու, ծնողների հետ աշխատելու և մասնագիտական քննարկումներ անցկացնելու համար: Այն պետք է լինի տեխնիկապես հագեցած, կահույքն՝ ամուր, իսկ խաղալիքներն ու պարագաները պետք է պատրաստված լինեն էկոլոգիապես մաքուր նյութերից: Տարածքի կահավորումը ներառում է լվացարանն՝ իր ծորակով:

Հատուկ մանկավարժի սենյակի կահավորման համար անհրաժեշտ միջոցները ներկայացված են հավելված 21-ում:

### **5.2.2. Հոգեբանական աջակցության սենյակ**

Հոգեբանի նպատակն է նպաստել երեխայի իմացական գործընթացների՝ զգայությունների և ընկալումների, հիշողության, ուշադրության, մտածողության, երևակայության ակտիվ զարգացմանը, նվազեցնել տագնապայնությունը, ակտիվացնել երեխայի շփման և հաղորդակցման հմտությունները, խթանել հասարակության հետ համատեղ գործունեությունը:

Հոգեբանական աջակցության սենյակի կառուցվածքում կարևոր դեր է խաղում սենյակի տարածքը, կահավորումը, սարքավորումներն ու դիդակտիկ պարագաները: Սենյակի ընդհանուր տարածքը պետք է կազմի 20-25քմ: Սենյակը պետք է ապահովված լինի օդափոխության և ջեռուցման համակարգերով, համապատասխան լուսավորությամբ: Տարածքի կահավորման մեջ պետք է անպայման ներառված լինի լվացարան՝ ծորակով: Պատերի գույնը պետք է լինի հանգիստ և չեզոք երանգների՝ լրացուցիչ հուզական լարվածությունից խուսափելու համար, այսինքն՝ բաց կապույտ, բաց կանաչ կամ բաց կրեմագույն երանգի:

Հոգեբանի սենյակի կահավորմանը ներկայացվող պահանջները տես հավելված 21-ում:

### **5.2.3. Լոգոպեդական աջակցության սենյակ**

Լոգոպեդի նպատակն է զարգացնել երեխայի խոսքային և ոչ խոսքային հաղորդակցումը, ուտելու, խմելու կարողությունը, շփման և հաղորդակցման հմտությունները:

Լոգոպեդական աջակցության սենյակի ընդհանուր տարածքը կազմում է 25 քմ: Պատերի գույնն ընտրվում է հանգիստ և չեզոք երանգների մեջ, որոնք չեն առաջացնում լրացուցիչ հուզումներ և լարվածություն, օրինակ՝ բաց կապույտ, բաց կանաչ, բաց կրեմագույն:

Ուսումնական-խաղային գոտին նախատեսված է անհատական և մինչև 4 երեխայի հետ խմբային աշխատանքների համար: Սենյակը պետք է ապահովված լինի լվացարանով, օդափոխության և ջեռուցման համակարգերով: Կարևոր է նաև ճիշտ լուսավորության, դռների համապատասխան լայնության առկայությունը՝ անվասայլակով տեղաշարժվող երեխաների մուտքն ապահովելու համար:

Լոգոպեդի սենյակի կահավորման համար անհրաժեշտ պարագաները ներկայացված են հավելված 21-ում:

#### **5.2.4. Սոցիալական մանկավարժի սենյակ**

Սոցիալական մանկավարժի նպատակն է բարենպաստ պայմաններ ստեղծել երեխայի անձնական զարգացման համար, նրան տրամադրել բազմակողմանի սոցիալ-կենցաղային հմտություններ, ինչպես նաև պաշտպանել երեխային իր բնակության վայրում: Սոցիալական մանկավարժի սենյակի չափը պետք է լինի բավարար երկու հիմնական ոլորտների աշխատանքը կազմակերպելու համար՝ աշխատանք երեխայի հետ և խորհրդատվություն ծնողին: Անհրաժեշտ է ապահովել սենյակի օդափոխության և ջեռուցման համակարգերը: Կարևոր է նաև ճիշտ լուսավորության առկայությունը: Սենյակի ընդհանուր տարածքը կազմում է 30-35 քմ:

Տարածքի կահավորվման մեջ պետք է անպայման ներառված լինի լվացարան՝ ծորակով: Պատերի գույնը պետք է լինի հանգիստ և չեզոք երանգների, որոնք չեն առաջացնում լրացուցիչ հուզումներ և լարվածություն, օրինակ՝ բաց կապույտ, բաց կանաչ, բաց կրեմագույն:

Ուսումնական-խաղային գոտին նախատեսված է մինչև 4 երեխաների հետ անհատական և խմբային աշխատանքների համար և պետք է հագեցած լինի ինքնասպասարկման ու սոցիալ-կենցաղային հմտությունները զարգացնող դիդակտիկ նյութերով, խաղերով:

Սոցիալական մանկավարժի սենյակի կահավորման համար անհրաժեշտ պարագաները ներկայացված են հավելված 21-ում:

#### **5.3. Ռեսուրս-սենյակի կահավորում**

ՏՄԱԿ-ների ՄՀ աջակցության ծառայություն տրամադրող աշխատակիցների աշխատանքը հիմնականում կազմակերպվում է նրանց կցված ուսումնական հաստատություններում: Այդ աշխատանքների իրականացման համար հարմարավետ միջավայր ապահովելու, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում սովորող երեխաների հանգիստը կազմակերպելու նպատակով ցանկալի է, որ ուսումնական հաստատություններն ունենան կահավորված ռեսուրս-սենյակներ, ինչը հնարավորություն կտա ՄՀ մասնագետներին իրենց պարապմունքներն անցկացնել ոչ թե դասասենյակներում, այլ առավել հարմարավետ պայմաններում, որտեղ ապահովված կլինեն նաև անհրաժեշտ միջոցներն ու պարագաները:

Ռեսուրս-սենյակի ներքին հարդարումը և հարդարման ժամանակ պոլիմերային նյութերի կիրառումը պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ և

հակահրդեհային նորմերի պահանջներին, որոնք օրենքով սահմանված են հանրակրթական հաստատությունների շենքերի համար: Անհրաժեշտ է ապահովել աղմուկից պաշտպանության միջոցառումներ, որի համար պետք է հարդարման ժամանակ օգտագործել ձայնամեկուսիչ նյութեր: Ռեսուրս-սենյակի հարդարման գունային լուծումները պետք է ապահովեն կրթական և զարգացնող գործընթացների հանգիստ կազմակերպումը:

Ռեսուրս-սենյակում լուսավորության մակարդակը հաշվարկելիս պետք է ղեկավարվել հանրակրթական հաստատության հիմնական շենքերի բնական լուսավորության ՀՀՇՆ II - 8.03 շինարարական նորմերի պահանջներով:

Ռեսուրս-սենյակի կրթական կամ զարգացնող գոտում՝ անհատական և խմբային պարապմունքների կազմակերպման ժամանակ, պետք է լինի սեղանների 2,5-3 ՔԼԳ և դրանք պետք է լուսավորվեն ձախ կողային լույսով: Աշխատանքների ճկուն կազմակերպման համար անհրաժեշտ է ապահովել ամբողջ աշխատանքային մակերեսի (սենյակի) հավասարաչափ լուսավորություն լրացուցիչ աղբյուրների միջոցով՝ անդրադարձվող լույս, վերևից լուսավորում, արհեստական լուսավորում և այլն:

Ռեսուրս-սենյակների համար պահանջվող նախընտրելի գույքի ցանկը ներկայացված է հավելված 22-ում:

#### **5.4 Անվտանգություն**

ՏՄԱԿ-ում աշխատակիցների և երեխաների անվտանգությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է հետևել մի շարք կանոնների:

- 1) ՏՄԱԿ-ի անձնակազմը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը, հատուկ ուշադրություն հատկացնելով անվտանգության հետևյալ չափանիշներին.
  - ՏՄԱԿ-ի տարածքն անվտանգ է շահառուների ազատ տեղաշարժման համար,
  - արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ՏՄԱԿ-ի շենքին,
  - ՏՄԱԿ-ի տարածքը մաքուր է, աղբը կանոնավոր հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս բերվում կենտրոնի տարածքից,
  - ՏՄԱԿ-ի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ.
- 2) ՏՄԱԿ-ում պահպանված են աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ.
  - շենքը վերանորոգված է,
  - շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին,
  - շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր,
  - ՏՄԱԿ-ն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման

համակարգով,

- շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր շահառուների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն),
- ՏՄԱԿ-ն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով,
- համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին,
- անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին,
- բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը,
- միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին,
- ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր,
- կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է,
- ՏՄԱԿ-ում մշակված և առկա է շահառուների ու անձնակազմի տարհանման պլան,
- ՏՄԱԿ-ում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով,
- տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով,
- բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն),
- հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿՈՓԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ**

N°	Գործունեություն	Գնահատման ցուցանիշներ, չափման միավոր	Պատասխանատուներ	Պլանավորված արժեքներ					Մեկնաբանություններ, հնարավոր ռիսկեր
				Եռ 1	Եռ 2	Եռ 3	Եռ 4	Տարի	
<b>1</b>	<b>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ ) գնահատում</b>								
1.1	Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից:	ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների ընդհանուր թիվը							
1.1.1		<b>ԿԱՊԿ առաջին գնահատում անցած երեխաների թիվը, մարդ, այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի</b>							
		<i>0-6 տարեկան երեխաների թիվը, մարդ</i>							
		<i>6-18 տարեկան երեխաների թիվը, մարդ</i>							
1.1.2		<b>ԿԱՊԿ կրկնական գնահատում անցած երեխաների թիվը, մարդ, այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի</b>							
		<i>0-6 տարեկան երեխաների թիվը, մարդ</i>							
1.1.3		<b>Վերագնահատում անցած երեխաների թիվը, մարդ, այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի</b>							
		<i>0-6 տարեկան երեխաների թիվը, մարդ</i>							
1.1.4		<b>ԿԱՊԿ հերթական գնահատում անցած երեխաների թիվը, մարդ, այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի և սեռի</b>							
		<i>6-18 տարեկան երեխաների թիվը, մարդ</i>							
1.2	<b>Ուսումնական հաստատությունների թիվը, որտեղ իրականացվել են գնահատումներ, այդ թվում՝ ըստ տիպի</b>								
	<i>ՆՈՒՀ-եր</i>								
	<i>Դպրոցներ</i>								
	<i>Այլ ուսումնական հաստատություններ</i>								

2	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում										
2.1	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում սովորողներին	<b>ՏՄԱԿ-ի սպասարկման փարածքի ուսումնական հաստատություններում սովորող ԿԱՊԿ ունեցող երեխաների թիվը, մարդ</b>									
2.1.1		<b>ՏՄԱԿ-ի կողմից տարածքային մակարդակում ՄՀ աջակցության ծառայություններ ստացած երեխաների թիվը, մարդ</b> <b>Դպրոց</b> Առաջին անգամ տվյալ եռամսյակում <b>ՆՈՒՀ</b> Առաջին անգամ տվյալ եռամսյակում <b>Այլ ուսումնական հաստատություններ</b> Առաջին անգամ տվյալ ամսում	<b>Դպրոց</b>								
2.1.2			<b>Միայն ուսումնական հաստատության կողմից ՄՀ աջակցության ծառայություններ ստացող երեխաների ընդհանուր թիվը</b> <b>Դպրոց</b> Առաջին անգամ տվյալ եռամսյակում <b>ՆՈՒՀ</b> Առաջին անգամ տվյալ եռամսյակում <b>Այլ ուսումնական հաստատություններ</b>	<b>Միայն ուսումնական հաստատության կողմից ՄՀ աջակցության ծառայություններ ստացող երեխաների ընդհանուր թիվը</b>							
2.2	ՄՀ աջակցության տրամադրումը՝ ըստ ծառայությունների տեսակի			<i>Տրամադրված ծառայությունների ընդհանուր թիվը, հափ</i>							
				<i>Տրամադրված հատուկ մանկավարժական ծառայությունների թիվը, հափ</i>							
				<i>Տրամադրված հոգեբանական ծառայությունների թիվը, հափ</i>							
				<i>Տրամադրված լոգոպեդական ծառայությունների թիվը, հափ</i>							
		<i>Տրամադրված սոց. մանկավարժական ծառայությունների թիվը, հափ</i>									
		<i>Տրամադրված, այլ նեղ մասնագիտական ծառայությունների թիվը, հափ</i>									



3 Կարողությունների զարգացում/վերապատրաստում									
3.1	Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սպասարկվող ուսումնական հաստատություններում մասնագետների, մանկավարժների և վարչական անձնակազմի վերապատրաստման դասընթացների կազմակերպում և իրականացում:	Ուսումնական հաստատությունների թիվը, որտեղ իրականացվել են վերապատրաստումներ, հատ այդ թվում՝ ըստ ուսումնական հաստատության տեսակի							
		ՆՈՒՀ-եր							
		Դպրոցներ							
3.2		Այլ ուսումնական հաստատություններ							
		Կազմակերպված վերապատրաստումների թիվը, հատ, այդ թվում՝ ըստ ուսումնական հաստատության տեսակի							
		ՆՈՒՀ-եր							
3.2.1		Դպրոցներ							
		Այլ ուսումնական հաստատություններ							
		<b>այդ թվում ըստ վերապատրաստման թեմաների</b>							
3.3		Վերապատրաստվող անձանց թիվը, մարդ, այդ թվում՝ ըստ մասնագետների խմբերի							
		Մանկավարժներ							
		Ուսուցչի օգնականներ							
		Բազմամասնագիտական թիմ							
		Վարչական անձնակազմ							
4 Խորհրդատվությունների իրականացում									
4.1	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին, սովորողների ծնողներին, վարչական անձնակազմին:	Ուսումնական հաստատությունների թիվը, որտեղ իրականացվել են խորհրդատվություններ, հատ							
		ՆՈՒՀ-եր							
		Դպրոցներ							
4.2		Այլ ուսումնական հաստատություններ							
		Տրամադրած խորհրդատվությունների թիվը, հատ ըստ ուսումնական հաստատությունների							
		ՆՈՒՀ-եր							
4.3		Դպրոցներ							
		Այլ ուսումնական հաստատություններ							
		Խորհրդատվություններ ստացած անձանց թիվը, մարդ (մանկավարժներ, ուսուցչի օգնականներ,							

		բազմամասնագիտական թիմ, ծնողներ, երեխաներ, այլ)									
		Ծնողներ									
		Մանկավարժներ									
		Ուսուցչի օգնականներ									
		Մասնագետներ									
		Վարչական անձնակազմ									
<b>5</b>	<b>Մշտադիտարկում</b>										
<b>5.1</b>	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացի մշտադիտարկում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սպասարկվող ուսումնական հաստատություններում:	Իրականացված մշտադիտարկումների ընդհանուր թիվը, հատ, Այդ թիվը ըստ ուսումնական հաստատությունների									
		ՆՈՒՀ-եր									
		Դպրոցներ									
		Այլ ուսումնական հաստատություններ									
<b>5.1.1</b>		<b>Ըստ մշտադիտարկման ուղղությունների</b>									
		ԿԱՊԿ գնահատման գործընթացի մշտադիտարկում									
		Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մշտադիտարկում									
		Ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումներ									
		Ծնող-ուսուցիչ-դպրոց համագործակցությունը									

6 Կրթության կազմակերպմանն օժանդակող ուսումնամեթոդական նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում										
6.1	Կրթության կազմակերպման համար նախատեսված ուսումնական նյութերի մշակում՝ ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժների, մասնագետների և ծնողների համար (այդ թվում՝ դիդակտիկ պարագաներ, խաղեր, զարգացնող ու աշխատանքային նյութեր):	Մշակված ուսումնամեթոդական նյութերի ընդհանուր թիվը, այդ թվում՝ ըստ տեսակների								
		<i>Մեթոդական ձեռնարկներ</i>								
		<i>Աշխատանքային տետրեր</i>								
		<i>Ուղեցույցներ</i>								
		<i>Դիդակտիկ պարագաներ</i>								
		<i>Խաղեր</i>								
6.2	Կրթության կազմակերպման համար նախատեսված ուսումնական, զարգացնող ու աշխատանքային նյութերի ձեռքբերում (դիդակտիկ պարագաներ, խաղեր, տեխնոլոգիաներ, գրականություն) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժների, մասնագետների և ծնողների համար:	<i>Ձեռքբերված զարգացնող ու աշխատանքային նյութերի թիվը, հատ</i>								

**Հավելված 2**

\_\_\_\_\_ տարածքային  
մանկավարժահոգեբանական աջակցության  
կենտրոնի տնօրեն՝  
\_\_\_\_\_ -ին

**ՀԱՅՏ**

Հարգելի տիկին/պարոն \_\_\_\_\_  
ազգանուն

Հայտնում եմք Ձեզ, որ \_\_\_\_\_ (ուսումնական  
հաստատության անվանումը) թվով \_\_\_ մանկավարժներ (ուսուցչի օգնականներ,  
մանկավարժահոգեբանական աջակցության թիմ, վարչական աշխատողներ)  
ունեն \_\_\_\_\_ թեմայով  
վերապատրաստման դասընթացների կարիք: Խնդրում եմ Ձեզ սահմանված  
կարգով իրականացնել նրանց վերապատրաստումը:

Ուսումնական հաստատության տնօրեն՝ \_\_\_\_\_  
ստորագրություն անուն, ազգանուն

Կ.Տ.

**Հավելված 3**

\_\_\_\_\_ տարածքային  
մանկավարժահոգեբանական աջակցության  
կենտրոնի տնօրեն՝  
\_\_\_\_\_ -ին

**ՀԱՅՏ**

Հարգելի տիկին/պարոն \_\_\_\_\_  
ազգանուն

Հայտնում ենք Ձեզ, որ \_\_\_\_\_ (ուսումնական  
հաստատության անվանումը) թվով \_\_\_ մանկավարժներ (ուսուցչի օգնականներ,  
մանկավարժահոգեբանական աջակցության թիմ, վարչական աշխատողներ)  
ունեն \_\_\_\_\_ թեմայով  
խորհրդատվությունների կարիք: Խնդրում եմ Ձեզ սահմանված կարգով  
իրականացնել վերոհիշյալ թեմայով խորհրդատվությունները:

Ուսումնական հաստատության տնօրեն՝ \_\_\_\_\_  
ստորագրություն անուն, ազգանուն

Կ.Տ.











**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ**  
**ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**  
**ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ**

Ամսաթիվ \_\_\_\_\_

Ուսումնական հաստատության անվանումը \_\_\_\_\_

Մշտադիտարկողներ \_\_\_\_\_

(սպաշտոն, անուն, ազգանուն)

**1. Թե՛մա՝ ԿԱՊԿ գնահատման գործընթացի մշտադիտարկում**

Մշտադիտարկման առարկա	Մշտադիտարկման ցուցանիշներ	Նշումներ	Մշտադիտարկման ժամանակահատված
Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ գնահատման եզրակացություն	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ գնահատման արձանագրություն	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		

Դիտարկումներ և առաջարկություններ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

2. Թե՛մա՝ Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մշտադիտարկում

Մշտադիտարկման առարկա	Մշտադիտարկման ցուցանիշներ	Նշումներ/ Որակի վերաբերյալ բացահայտված ռիսկ	Մշտադիտարկման ժամանակահատված
Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում	<input type="checkbox"/> Իրականացվել է		
	<input type="checkbox"/> Իրականացվել է մասամբ		
	<input type="checkbox"/> Չի իրականացվել		
Կանխարգելիչ միջամտությունների պլան (ԿՄՊ)	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
Անհատական ուսուցման պլան (ԱՈւՊ/ԱՈՒԶՊ)	<input type="checkbox"/> Մշակված է		
	<input type="checkbox"/> Մշակված է մասամբ		
	<input type="checkbox"/> Մշակված չէ		

Դիտարկումներ և առաջարկություններ \_\_\_\_\_

---



---



---



---

3. Թե՛մա՝ Ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումներ

Մշտադիտարկման առարկա	Մշտադիտարկման ցուցանիշներ	Նշումներ/ Որակի վերաբերյալ բացահայտված ռիսկ	Մշտադիտարկման ժամանակահատված
Ուսումնական գործընթացի հարմարեցումներ	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
Կրթական առաջընթացի գնահատման հարմարեցումներ	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
Միջավայրային հարմարեցումներ	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		

Դիտարկումներ և առաջարկություններ \_\_\_\_\_

---



---



---



---

4. Թեմա՝ ծնող-ուսուցիչ-դպրոց համագործակցությունը

Մշտադիտարկման առարկա	Մշտադիտարկման ցուցանիշներ	Նշումներ/ Որակի վերաբերյալ բացահայտված ռիսկ	Մշտադիտարկման ժամանակահատված
Ծնողների ներգրավվածությունը ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ գնահատման գործընթացին	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
Ծնողների ներգրավվածությունը որպես ԱՈՒՊ/ԱՈՒԶՊ -ի և ԿՄՊ-ի մշակման թիմի անդամ	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
Ուսուցիչների ներգրավվածությունը ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ գնահատման գործընթացին	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		
Ուսուցիչների ներգրավվածությունը որպես ԱՈՒՊ/ԱՈՒԶՊ -ի և ԿՄՊ-ի մշակման թիմի անդամ	<input type="checkbox"/> Առկա է		
	<input type="checkbox"/> Թերի է		
	<input type="checkbox"/> Առկա չէ		

Դիտարկումներ և առաջարկություններ \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_

Եզրակացություն \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_

Հաջորդ մշտադիտարկման ամսաթիվ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ տարածքային մանկավարժահոգեբանական  
 աջակցության կենտրոնի տնօրեն՝ \_\_\_\_\_

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

hh	Ամսաթիվ	Ուսումնական հաստատության անվանում	Մշտադիտարկում իրականացնող մասնագետի անուն, ազգանուն, պաշտոն	Մշտադիտարկում իրականացնող մասնագետի անուն, ազգանուն, պաշտոն	Մշտադիտարկման թեմա	Մշտադիտարկման ժամանակահատված	Հաջորդ մշտադիտարկման ամսաթիվ
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿ

ԵՐԵՒԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

( \_\_\_\_\_ ՏՄԱԿ-ի Գնահատման և մշտադիտարկման բաժին)

հհ	Ամսաթիվ	Խորհրդատվության տրամադրման վայրը	Խորհրդատվության թեման	Խորհրդատվություն անցկացնող մասնագետի անուն, ազգանուն, պաշտոն	Խորհրդատվություն ստացողի պաշտոնը (տնօրեն, մանկավարժ, ուսուցչի օգնական, ՄՀ աջակցության թիմ, ծնող, երեխա)	Խորհրդատվություն ստացողի անուն, ազգանունը	Ստորագրություն
1	2	3	4	5	6	7	8

Դիտարկումներ և առաջարկություններ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

**ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿ**

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

(\_\_\_\_\_ ՏՄԱԿ-ի մանկավարժահոգեբանական աջակցության բաժին)

հհ	Ամսաթիվ	Խորհրդատվության տրամադրման վայրը	Խորհրդատվության թեման	Խորհրդատվություն անցկացնող մասնագետի անուն, ազգանուն, պաշտոն	Խորհրդատվություն ստացողի պաշտոնը (տնօրեն, մանկավարժ, ուսուցչի օգնական, ՄՀ աջակցության թիմ, ծնող, երեխա)	Խորհրդատվություն ստացողի անուն, ազգանունը	Ստորագրություն
1	2	3	4	5	6	7	8

Դիտարկումներ և առաջարկություններ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԻ,  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

( \_\_\_\_\_ ՏՄԱԿ-ի Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժին)

հհ	Ամսաթիվ	Խորհրդատվության տրամադրման վայրը	Խորհրդատվության թեման	Խորհրդատվության անցկացնողը/ մասնագետի անուն, ազգանուն, պաշտոն	Խորհրդատվություն ստացողի պաշտոնը (տնօրեն, մանկավարժ, ուսուցչի օգնական, ՄՀ աջակցության թիմ, ծնող, երեխա)	Խորհրդատվություն ստացողի անուն, ազգանունը	Ստորագրություն
1	2	3	4	5	6	7	8

Դիտարկումներ և առաջարկություններ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_









**ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

(\_\_\_\_\_ ՏՄԱԿ-ի Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժին)

<b>Բովանդակային մշակումներ</b>					
<b>հհ</b>	<b>Ամիս</b>	<b>Թեմա (անվանում)</b>	<b>Տեսակը</b>	<b>Հեղինակ (ներ)</b>	<b>Վերջնաժամկետ</b>
1					
2					
3					
4					
5					
6					
7					
8					
9					
10					





**5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

հհ	Ամսաթիվ	Ուսումնական հաստատության անվանում	Մշտադիտարկում իրականացնող մասնագետի անուն, ազգանուն, պաշտոն	Մշտադիտարկում իրականացնող մասնագետի անուն, ազգանուն, պաշտոն	Մշտադիտարկ ման թեմա	Մշտադիտարկման ժամանակահատված	Հաջորդ մշտադիտարկման ամսաթիվ
1							
2							
3							

**6. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

Բովանդակային մշակումներ					
հհ	Ամիս	Թեմա (անվանում)	Տեսակը	Հեղինակ (ներ)	Վերջնաժամկետ
1					
2					
3					









2.1.2		Միայն ուսումնական հաստատության կողմից ՄՀ աջակցության ծառայություններ ստացող երեխաների ընդհանուր թիվը															
<b>Դպրոց</b>																	
<i>Այդ թվում փրկանք</i>																	
<i>աղջիկներ</i>																	
Առաջին անգամ տվյալ ամսում																	
<b>ՆՈՒՀ</b>																	
<i>Այդ թվում փրկանք</i>																	
<i>աղջիկներ</i>																	
Առաջին անգամ տվյալ ամսում																	
<b>Այլ ուսումնական հաստատություններ</b>																	
<i>Այդ թվում՝ փրկանք</i>																	
<i>աղջիկներ</i>																	
Առաջին անգամ տվյալ ամսում																	
2.2	ՄՀ աջակցության տրամադրումը՝ ըստ ծառայությունների տեսակի	<b>Տրամադրված ծառայությունների ընդհանուր թիվը, հատ</b>															
<b>Տրամադրված հատուկ մանկավարժական ծառայությունների թիվը, հատ</b>																	
<b>Տրամադրված հոգեբանական ծառայությունների թիվը, հատ</b>																	
<b>Տրամադրված լոգոպեդական ծառայությունների թիվը, հատ</b>																	
<b>Տրամադրված սոց. մանկավարժական ծառայությունների թիվը, հատ</b>																	
<b>Տրամադրված, այլ նեղ մասնագիտական ծառայությունների թիվը, հատ</b>																	







**ԿԳՄՍ նախարարություն ներկայացվող եռամսյակային հաշվետվության ձևաթուղթ**

Ծրագրի անվանումը՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ»

Ծրագրի իրականացման տևողությունը /աճողական/ \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը \_\_\_\_\_

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

հհ	Միջոցառումների անվանումը	Համառոտ բովանդակությունը	Գնահատման ցուցանիշներ, չափման միավոր	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
				Տարեկան պլանավորման ցուցանիշը	Պլանավորված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար	Փաստացի ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում		Պլանավորված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյ.3 - սյ.2)	Տարբերության պատճառը (սյ. 3-ում նշված տարբերության պարզաբանումները)
						1	2		
Ա	Բ	Գ	1	2	3	4	5		
1	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ) գնահատում	Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սպասարկվող ուսումնական հաստատություններում:	ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների թիվը, մարդ			աղջիկ	տղա		

2	Մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրում	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սպասարկվող ուսումնական հաստատություններում նախադպրոցական և դպրոցական տարիքի ԿԱՊԿ ունեցող երեխաներին:	Դպրոցներում սովորող ԿԱՊԿ ունեցող երեխաների թիվը, մարդ						
			ՆՈՒՀ-երում սովորող ԿԱՊԿ ունեցող երեխաների թիվը, մարդ						
3	Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ	Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սպասարկվող ուսումնական հաստատություններում մասնագետների և մանկավարժների կարողությունների զարգացման / վերապատրաստման դասընթացների կազմակերպում և իրականացում:	Ուսումնական հաստատությունների թիվը, որտեղ իրականացվել են վերապատրաստումներ, հատ						
			Վերապատրաստումների թիվը, հատ						
			Վերապատրաստվող անձանց թիվը, մարդ						
4	Խորհրդատվություն	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին, սովորողների ծնողներին:	Ուսումնական հաստատությունների թիվը, որտեղ իրականացվել են խորհրդատվություններ, հատ						
			Խորհրդատվությունների թիվը, հատ						
			Խորհրդատվություններ ստացած անձանց թիվը, մարդ (մանկավարժներ,						



			ուսուցչի օգնականներ, բազմամասնագիտակ ան թիվ)					
5	Մշտադիտարկում	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացի մշտադիտարկում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սպասարկվող ուսումնական հաստատություններում:	Մշտադիտարկումներ ի թիվը, հատ					

Կենտրոնի անվանումը՝ « \_\_\_\_\_ տարածքային  
մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրեն՝

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

ամսաթիվ

**ՏՄԱԿ-Ի ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ**

հհ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը
1.	Տնօրեն	- 1 հաստիքային միավոր
2.	Տնօրենի տեղակալ	- 1 հաստիքային միավոր՝ փոքր կենտրոնի դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ միջին կենտրոնի դեպքում, - 2 հաստիքային միավոր՝ մեծ կենտրոնի դեպքում
3.	Գլխավոր հաշվապահ	- 1 հաստիքային միավոր
4.	Տնտեսվար	- 1 հաստիքային միավոր՝ մեծ կենտրոնի դեպքում
5.	Համակարգչային օպերատոր	- 0,5 հաստիքային միավոր՝ փոքր կենտրոնի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ միջին կենտրոնի դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ մեծ կենտրոնի դեպքում
6.	Տեսուչ՝ կադրերի գծով և/կամ Գործավար	- 0,5 հաստիքային միավոր՝ փոքր կենտրոնի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ միջին կենտրոնի դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ մեծ կենտրոնի դեպքում
7.	Վարորդ	- 0,5 հաստիքային միավոր՝ փոքր կենտրոնի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ միջին կենտրոնի դեպքում, - 1,5 հաստիքային միավոր՝ մեծ կենտրոնի դեպքում
8.	Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետներ /էլեկտրագետ, սանտեխնիկ, փականագործ/	- 0,5 հաստիքային միավոր՝ փոքր կենտրոնի դեպքում, - 0,75 հաստիքային միավոր՝ միջին կենտրոնի դեպքում, - 1 հաստիքային միավոր՝ մեծ կենտրոնի դեպքում
9.	Հնոցապան /կաթսայատան առկայության դեպքում/	- ջեռուցման ժամանակաշրջանում՝ համաձայն հերթափոխի հաշվարկի (4 հաստիքային միավոր 5 ամիս ժամկետով)

10.	<p>Մասնագետ՝ ջեռուցման համակարգի սպասարկման /ջեռուցումն ինքնակարգավորվող համակարգով իրականացնելու դեպքում/</p>	<p>- ջեռուցման ժամանակաշրջանում 0,5 հաստիքային միավոր</p>
11.	Պահակ	<p>- 4 հաստիքային միավոր</p>
12.	Հավաքարար	<p>- 1 հաստիքային միավոր՝ շենք-շինությունների տարածքի յուրաքանչյուր մաքրվող մինչև 600 քառ.մ-ի մաքրման համար  - ևս 1 հաստիքային միավոր՝ բակի յուրաքանչյուր մաքրվող մինչև 2000 քառ.մ-ի մաքրման համար, սակայն՝ ոչ ավելի, քան 2 հաստիքային միավոր</p>

**Հատուկ մանկավարժի աջակցության սենյակի կահավորումը  
(օլիգոֆրենոմանկավարժ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ)**

<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐՇԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿ</b> (օլիգոֆրենոմանկավարժ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ)					
<b>Կահույք և անհրաժեշտ պարագաներ</b>					
հհ	Անվանում	Քանակ	Հատկություն	Չափ	Գույն
1.	Մասնագետի համակարգչային գրասեղան	1 հատ	Պատրաստված՝ փայտից կամ լամինատից:	1390 (550) x 1000 (680) x 750 մմ, եզր. (2 մմ)	շագանակագույնի կամ մոխրագույնի երանգներ
2.	Համակարգչային աթոռ	1 հատ	Փափուկ կաշի, երանգավորված փայտ, շրջանակ՝ պողպատ, լիցք՝ պոլիուրեթանային փրփուր	530 x 540 x 910 մմ, հաստություն՝ 10 մմ,	սև կամ մոխրագույն
3.	Համակարգիչ	1 հատ		Լայնություն՝ 489, բարձրություն՝ 367 հաստություն՝ 209 մմ	գույնը՝ սև
4.	Ինտերակտիվ ՍՄԱՐԹ գրատախտակ, պրոյեկտոր՝ էկրանին նկարներ, տեսանյութեր և ներկայացումներ ցուցադրելու համար: Առանցքային լուծում՝ բազմազան դասընթացների կազմակերպման համար:	1 հատ	Աշխատանքները պահվում են SMART Notebook ձևաչափով, ինչը հնարավորություն է տալիս ուսումնասիրել նյութերը խմբում, փոփոխել և տարածել դրանք:		
5.	Պատի ժամացույց	1 հատ		Միջին չափի	

6.	Կոմպակտ, բազմաֆունկցիոնալ, կլոր եզրերով սեղան՝ 3-7 տարեկանների համար	1 x 2 հատ	Առավելությունը՝ հնարավոր է միացնել իրար խմբային աշխատանքների ժամանակ, ունեն շարժական ոտքեր, անիվները հատուկ արգելակներով են:	Սեղանի տրամագիծը՝ Ø 95 սմ, բարձրությունը հատակից՝ 46 սմ	Սպիտակ
7.	Աթոռ՝ 3-7 տարեկան երեխաների համար	4 հատ	Մանկական էրգոնոմիկ աթոռ: Մոնոբլոկ, պատրաստված է պոլիպրոպիլենից: Թեթև ձևավորում: Կայուն:	Նստատեղի բարձրությունը հատակից՝ 26 սմ	Ծիրանագույն
8.	Կոմպակտ, բազմաֆունկցիոնալ, կլոր եզրերով սեղան՝ 7 և բարձր տարիքի երեխաների համար	1 x 2 հատ	Փոքր տարիքի երեխաների համար: <i>Հարմարավետ միջավայրը նպաստում է խաղաղ մթնոլորտի ձևավորմանը, երեխաների հուզական բարեկեցությանը և դրդում է ավելի լավ սովորել:</i>	Սեղանի տրամագիծը՝ Ø 95 սմ, բարձրությունը հատակից՝ 64 սմ	Սպիտակ
9.	Աթոռ՝ 7 և բարձր տարիքի երեխաների համար	4 հատ	Մանկական էրգոնոմիկ աթոռ: Մոնոբլոկ, պատրաստված է պոլիպրոպիլենից: Թեթև ձևավորում: Կայուն:	Նստատեղի բարձրությունը հատակից՝ 38 սմ	Կանաչ
10.	Սեղան մեծահասակների թիմային քննարկումների համար	1 հատ	Առավելությունը՝ հնարավոր է ծալել, փակել և տեղաշարժել ցանկացած անկյուն:	160 x 80 սմ բարձրությունը հատակից՝ 70 սմ	Սպիտակ
11.	Աթոռ՝ մեծահասակների թիմային քննարկումների համար	6 հատ	Էրգոնոմիկ աթոռ: Մոնոբլոկ, պատրաստված է պոլիպրոպիլենից: Թեթև ձևավորում: Կայուն:	Նստատեղի բարձրությունը հատակից՝ 42 սմ	Մոխրագույն

12.	Պահարան խաղերի և գրականության համար	1 հատ	Առավելությունը՝ տարածքի խնայում, իրերի կազմակերպված դասավորություն	158 սմ x 32 սմ x 103 սմ Զամբյուղի երկարությունը՝ x21 սմ	զամբյուղների գույնը՝ բաց մոխրագույն
13.	Պահարաններ ցածր՝ գրենական պիտույքների, աշխատանքային նյութերի համար	1 հատ	Պահարան ցածր՝ գրենական պիտույքների, աշխատանքային նյութերի համար	81սմ x 32սմ x 103սմ Զամբյուղի երկարությունը՝ 12 սմ	զամբյուղների գույնը՝ ծիրանագույն
14.	Մարկերային շարժական գրատախտակ	1 հատ	Աշխատանքային դիրքում գրատախտակի ներքևի եզրի բարձրությունը հատակից պետք է ընդունել 80-90 սմ, գրատախտակի տեսանելիության անկյունը պետք է ընդունել ոչ պակաս 40°:	1.2 x 0.9 մ	Սպիտակ
15.	Մատ՝ մարմնամարզական գորգ	2 հատ	Փափուկ, ճկուն և ցնցումները կլանող նյութը կանխում է վնասվածքները և ընկնելիս թուլացնում ցավը:	2.0 x 1.0 x 0.1 մ	ծիրանագույն կամ կանաչ
16.	Եռանկյունաձև բարձեր	3 հատ՝ տարբեր չափերի	Բարձերը նախատեսված են հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող երեխաների ճիշտ դիրքավորում ապահովելու համար:	20 x 60 x 60 սմ, 15 x 80 x 60 սմ, 45 x 45 x 35 սմ	ծիրանագույն կամ կանաչ

17.	Փափուկ պարկ-աթոռ	2 հատ	Պարկ-աթոռի միջուկը՝ պենպաստ գնդիկներից, ծածկոցը՝ երկշերտ: Առավելությունները՝ հարմարավետ է, թեթև, պատրաստված է էկոլոգիապես մաքուր հումքից, երեխաների համար՝ անվտանգ, խոնավություն չի կլանում, ճկուն է:	1.22 x 1 մ	ծիրանագույն, կանաչ
18.	Հարմարեցված աթոռ իր սեղանով՝ հենաշարժական խնդիրներ ունեցող երեխաների համար	1 հատ			
19.	Շվեդական պատ	1 հատ	Հաճարենու փայտ, մետաղ, ջրային հիմքով ներկեր և լաք:	2.1 x 1.08 x 0 x 15 մ	
20.	Փափուկ, պտտվող, փափուկ գլանակներով թեքահարթակ	1 հատ	Միանում է շվեդական պատին: Նրբատախտակ մետաղ, ջրային հիմքով լաք, պլաստիկ, ջրային գլանակներ:	2.0 x 0.58 x 0.23 մ	
